«Ռուս-Հայկական համալսարան» բարձրագույն կրթության
միջպետական կրթական կազմակերպություն

Հաստատում եմ՝
Իրավունքի Ինստիտուտի տնօրեն
Քալաշյան Մ.Ա.

«23» հունիսի, 2026 թ.

Ինստիտուտ՝ Իրավունքի
Ամբիոն՝ Քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի

Հեղինակ՝ ի.գ.թ., դոցենտ Զոհրաբյան Ն.Յու.

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Քրեական իրավունք (ընդհանուր մաս)

Մասնագիտություն `042101.00.6 «Իրավագիտություն»
Կրթական ծրագիր `042101.01.6 «Իրավագիտություն»

Դասընթացի անոտացիան

Քրեական իրավունքը հանդիսանում է հիմնարար իրավաբանական առարկաներից և իրավունքի կարևորագույն ճյուղերից մեկը: Քրեական արդարադատության արդյունավետ իրականացումը խախտված իրավունքների և օրինական շահերի պատշաճ ապահովման գրավականն է: Հասարակական հարաբերությունների զարգացման սրընթաց տեմպերը պահանջում են պատշաճ քրեաիրավական կարգավորում և պատշաճ քրեաիրավական պաշտպանություն հանցավոր ոտնձգություններից:

Ապագա մասնագետների շրջանում քրեական իրավունքի ոլորտում խորը գիտելիքների ձևավորումը քրեական դատավարության ոլորտում նրանց հաջող մասնագիտական գործունեության գրավականն է:

Քրեական իրավունքի ընդհանուր մասի դասընթացի շրջանակներում նախատեսվում է ուսանողներին ծանոթացնել քրեական իրավունքի հիմնական կատեգորիաներին և ինստիտուտներին, դրանց իրականացման առանձնահատկություններին: Հատուկ ուշադրություն է դարձվում ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումների ուսումնասիրությանը՝ նպատակ ունենալով ուսանողներին ծանոթացնել քրեական օրենսդրության նորմերի կիրառման առավել խնդրահարույց հարցերի վերաբերյալ ՀՀ Բարձրագույն դատական ատյանի դիրքորոշումներին, զարգացնել վերլուծական մտածողությունը և գործնական հմտությունները:

Դասընթացի նպատակը և խնդիրները

"Քրեական իրավունք (ընդհանուր մաս)" առարկայի ուսումնասիրության նպատակն է ուսանողների մոտ ձևավորել ՀՀ քրեական օրենսդրության ընդհանուր մասի համակարգի վերաբերյալ համալիր պատկերացում, ձևավորել և զարգացնել վերլուծական մտածողության, քրեական օրենսդրության նորմերի մեկնաբանման հմտություններ և զարգացնել դրանց գործնական կիրառման հմտությունները:

Դասընթացի շրջանակներում լուծվում են հետևյալ խնդիրները.

-հիմնական քրեաիրավական կատեգորիաների և ինստիտուտների վերաբերյալ գիտելիքների ամբողջական համակարգի ձևավորում;

-ՀՀ քրեաիրավական քաղաքականության հիմնական ուղղությունների և զարգացման միտումների վերաբերյալ ընդհանուր պատկերացումների ձևավորում;

- իրավակիրառ պրակտիկայի վերլուծության, ընդհանրացման հմտությունների ձևավորում;

- իրավակիրառ պրակտիկայում քրեական օրենսդրության նորմերի կիրառման հիմնական խնդիրների և դրանց լուծման առանձնահատկությունների վերաբերյալ պատկերացումների ձևավորում:

Դասընթացի օբյեկտը և առարկան

- **Օբյեկտ՝** Քրեաիրավական հարաբերություններ, որոնք ծագում են հանցագործություն կատարելու և դրա համար պատասխանատվություն կիրառելու գործընթացում:
- **Առարկա՝** Քրեական իրավունքի ընդհանուր մասի ինստիտուտները, այդ թվում՝ հանցագործության fogյաբանությունը, հանցակազմի կառուցվածքը, պատժի նպատակները, ազատազրկման և այլ քրեական պատժատեսակների կարգավորումները, ինչպես նաև քրեաիրավական պատասխանատվության հիմքերը:

Դասընթացի մուտքային պահանջները

Դասընթացին մասնակցելու համար ուսանողը պետք է տիրապետի իրավունքի ընդհանուր սկզբունքներին, Սահմանադրական իրավունքի և մարդու իրավունքների հիմնարար հասկացություններին: Ցանկալի է նաև ընդհանուր պատկերացում ունենալ իրավական նորմի կառուցվածքի և իրավունքի ճյուղերի համակարգի մասին:

Դասընթացի յուրացման արդյունքում ձեռք բերվող գիտելիքները և կարողությունները

Դասընթացի յուրացման արդյունքը ապահովում է անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների ու կարողությունների համապատասխան ՈԱՇ-ի վերջնարդյունքներին:

Գիտելիքները՝

- Հայաստանի Հանրապետության քրեական իրավունքի պատմության, զարգացման հիմնական փուլերի վերաբերյալ հիմնարար գիտելիք;
- Քրեական արդարադատության ոլորտում իրավակիրառման (մասնավորապես՝ իրավաբանական փաստերի վերլուծության, արարքի քրեաիրավական որակման, քրեաիրավական նորմերի մեկնաբանման), քրեաիրավական նորմերի մրցակցությունը լուծելու կանոնների և տեսությունների վերաբերյալ հիմնարար գիտելիք;
- Ժամանակակից քրեական իրավունքի զարգացման հիմնական միտումների և դրա կատարելագործման ուղղությունների վերաբերյալ հիմնարար գիտելիք;
- ՀՀ Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումները քրեական իրավունք ընդհանուր մասի նորմերի կիրառման հարցերի վերաբերյալ հիմնարար գիտելիք;
- Քրեական իրավունքի սկզբունքների, ինստիտուտների, նորմերի ծագումնաբանության և էության, այդ ինստիտուտների և նորմերի օրենսդրական ամրագրման և կիրառման գործընթացի վերաբերյալ հիմնարար և համակարգված գիտելիք;
- Մասնագիտական գործառույթների իրականացման համար անհրաժեշտ հարակից ոլորտների, ինչպես նաև՝ մասնագիտական բարեվարքության (էթիկայի) կանոնների նկոռուպցիային հակազդման վերաբերյալ գիտելիք:

Հմտությունները՝

- գիտելիքի կիրառման հմտությունները՝
  - Կարող է կիրառել քրեական իրավունքի ոլորտում մասնագիտական գիտելիքները իրավակիրառ պրակտիկայում հանդիպող իրավական խնդիրների լուծման համար:

- Կարող է ինքնուրույն կազմել և մշակել քրեական գործերով դատական որոշումների որոշումների նախագծեր, տալ իրավաբանական եզրակացություններ քրեական արդարադատության ոլորտում առկա խնդրների վերաբերյալ, տրամադրել իրավաբանական խորհրդատվություն քրեաիրավական հարցերի վերաբերյալ;
- Կարող է բանակցություններ վարել, ներկայացնել իր պաշտպանյալի իրավունքները և օրինական շահերը կոնկրետ քրեական գործի շրջանակներում, ներառյալ իրավական դիրքորոշումների մշակումը, փաստաթղթերի պատրաստումը, փաստարկների ներկայացումը և դատական նիստերում իրավունքների պաշտպանությունը;
- Կարող է իրավունքի մեկնաբանման կանոնների կիրառմամբ վերլուծել և պարզաբանել քրեաիրավական նորմերը;
- Կարող է օրինական մեթոդներով որոնել և գտնել քրեական գործերով ատական և իրավական այլ ակտեր կամ այլ տեղեկություններ, օգտագործել դրանք մասնագիտական ոլորտում խնդրի լուծման համար, ինչպես նաև՝ հետևել իրավական ակտերի փոփոխություններին;
- Կարող է վերհանել իրավակիրառ պրակտիկայում առաջացած իրավական խնդիրը՝ կապված արարքի քրեաիրավական որակման, պատժի նշակաման հետ, տարբերակել գործի լուծման համար էական փաստերը, որոշել կիրառելի քրեաիրավական նորմը և կիրառել փաստերի նկատմամբ, եզրահանգում անել գործի լուծման վերաբերյալ;
- Կարող է արագ կողմնորոշվել իրավական խնդիրներ (այդ թվում՝ անկանխատեսելի) լուծելիս և դրանց վերաբերյալ ներկայացնել իր փաստարկված դիրքորոշումը, այդ թվում՝ առաջ քաշելով հակափաստարկներ;

• ընդհանրական իմացական հմտությունները՝

- Կարող է դրսևորել քննական և փաստարկված վերլուծական մոտեցում՝ իրավական խնդիրները բացահայտելու և դրանց լուծման ուղիները մշակելու համար։
- Կարող է մասնագիտական խնդիրները բացահայտելիս և լուծումներ առաջադրելիս ցուցաբերել նախաձեռնողականություն և ստեղծագործական մոտեցում։

Կարողունակությունը (կոմպետենցիան)՝

- ինքնուրույնությունը և պատասխանատվությունը՝

- Ունակ է՝ ինքնուրույն կամ համապատասխան ղեկավարման ներքո ծավալելու լիարժեք մասնագիտական գործունեություն քրեական արդարադատության ոլորտում;
- Ունակ է՝ պարբերաբար ուսումնասիրելու քրեական օրենսդրությունը, պրակտիկան, մասնավորապես, ՀՀ Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումները, մասնագիտական գրականությունը և ինտեգրվելու հարափոփոխ բազմամշակութային աշխատանքային միջավայրին;
- Ունակ է՝ ուսումնառության և (կամ) աշխատանքի ընթացքում կատարելու առաջադրանքներ՝ ուղղված քրեական օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի զարգացմանը, ցուցաբերելու անհրաժեշտ ինքնուրույնություն և ստանձնելու պատասխանատվություն մասնագիտական որոշումներ կայացնելիս:
- Ունակ է՝ աշխատելու թիմում:
- Ունակ է՝ անձնական օրինակով նպաստելու իրավական պետության և քաղաքացիական հասարակության կայացմանը, ազգային և համամարդկային արժեքներիտարածմանը:
- Տիրապետում է բավարար գիտելիքների և կարողությունների քրեական իրավունքի ոլորտում՝ բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում իրավագիտության բնագավառում ուսումը շարունակելու համար:
- Ունակ է կառուցել մեղադրանքի և պաշտպանության ռազմավարություն և հիմնավորել իր դիրքորոշումը մասնագիտական էթիկայի կանոնների պահպանմամբ;
- Ունակ է ձևակերպել հիմնավոր եզրակացություններ և առաջարկություններ քրեական իրավունքի հարաբերությունների վերլուծության հիման վրա
- Ունակ է քրեական արդարադատության իրականացման գործընթացում քրեական իրավունքի նորմերի մեկնաբանման տարբեր եղանակների օգտագործմանը;
- Ունակ է կատարվածին գրագետ քրեաիրավական գնահատական տալու և քրեաիրավական նորմերի իրացմանը;
- Ունակ է իրականացնել իրավապահ և իրավակիրառ պրակտիկայի վերլուծության և

ամփոփում;

- Ունակ լուծել է քրեաիրավական նորմերի մրցակցությունը;
- Ունակ է իրավակիրառ գործունեության մեջ մասնագիտական խնդիրներ լուծելիս հիմնավորել սեփական դիրքորոշումը:

Դասավանդման եղանակները և մեթոդները

"Քրեական իրավունք (ընդհանուր մաս)" առարկայի դասավանդման գործընթացում իրականացվում է դասավանդման դասական (ավանդական) և նորարարական (ինտերակտիվ) մեթոդների համադրություն: Բացի դասական դասախոսությունից և սեմինարից, նախատեսվում է նաև ուսանողների ակտիվ ներգրավումը քրեական իրավունքի առավել խնդրահարույց ասպեկտների քննարկմանը ՝ բանավեճերի կազմակերպման միջոցով: Բանավեճի ընթացքում ուսանողները բաժանվում են երկու խմբի, որոնցից յուրաքանչյուրը հիմնավորում է իր դիրքորոշումը: Դասավանդման գործընթացում նախատեսվում է օգտագործել case-law մեթոդը, որի շրջանակներում ուսանողները քրեաիրավական վերլուծության են ենթարկում կոնկրետ իրավիճակ, զարգացնելով պրակտիկ հմտությունները:

Դասընթացի տեղն ուսումնական ծրագրում

Դասընթացը ներառված է 8 ակադեմիական կրեդիտ (288 ակադեմիական ժամ) աշխատատարությամբ, որից 128 ակադեմիական ժամ նախատեսվում է գործնական պարապմունքների համար: Դասընթացը նախատեսվում է ուսումնասիրել 2 ուսումնական տարվա 3-րդ և 4-րդ կիսամյակներում:

Ուսումնական աշխատանքի տեսակները	Ընդամենը, ակադ. ժամեր
1.Առարկայի ուսումնասիրման ընդհանուր աշխատատարությունն, այդ թվում՝	288

1.1. Լսարանային պարապմունքներ, այդ թվում՝	128
1.1.2. Գործնական պարապմունքներ, այդ թվում՝	64
1.1.3 Դասախոսություններ	64
1.2. Ինքնուրույն աշխատանք, այդ թվում՝	160
Ամփոփիչ ստուգում (ստուգարք)	

Դասընթացի ծավալի բաշխում (ակադեմիական ժամերով) ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների

Առարկայի բաժինները և թեմաները	Ընդամենը	Դասախոսու-թյուններ	Գործնական / սեմինար պարապմունքներ
1	**2=3+4**	**3**	**4**
Թեմա 1.Քրեական իրավունքի հասկացությունը, առարկան, մեթոդները, սկզբունքները	**8**	**2**	**2**
Թեմա 2. Քրեական օրենք	**8**	**2**	**2**
Թեմա 3. Հանցագործություն	**14**	**2**	**2**
Թեմա 4. Քրեական Պատասխանատվության հասկացությունը	**16**	**3**	**3**
Թեմա 5. Հանցակազմ	**16**	**4**	**4**
Թեմա 6. Հանցագործության օբյեկտ	**14**	**3**	**3**
Թեմա 7. Հանցագործության օբյեկտիվ կողմը	**14**	**3**	**3**
Թեմա 8. Հանցագործության սուբյեկտը	**14**	**3**	**3**
Թեմա 9. Հանցագործության սուբյեկտիվ կողմը	**14**	**3**	**3**

Թեմա 10. Հանցագործության կատարման փուլերը	**16**	**4**	**4**
Թեմա 11. Հանցակցությունը	**16**	**4**	**4**
Թեմա 12. Հանցագործությունների բազմակիությունը	**16**	**4**	**4**
Թեմա 13. Քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքները	**16**	**4**	**4**
Թեմա 14. Պատիժը	**16**	**2**	**2**
Թեմա 15. Պատժի տեսակները	**14**	**2**	**2**
Թեմա 16. Պատժի նշանակումը	**16**	**3**	**3**
Թեմա 17. Քրեական պատասխանատվությունից ազատելը	**16**	**4**	**4**
Թեմա 18. Քրեական պատժից ազատելը	**16**	**4**	**4**
Թեմա 19. Համաներումը, ներումը, դատվածությունը	**14**	**4**	**4**
Թեմա 20. Անչափահասների քրեական պատասխանատվության առանձնահատկությունները	**14**	**4**	**4**
Ընդամենը	288	64	64

Դասընթացի թեմաների բովանդակությունը

Թեմա **1.** Քրեական իրավունքի հասկացությունը, առարկան, մեթոդները, սկզբունքները Քրեական իրավունքը՝ որպես հանրային իրավունքի ճյուղ: Քրեական իրավունքի հասկացությունը: Քրեական իրավունքի գիտության հայեցակարգը և նպատակը: Քրեական իրավունքի գիտության մեթոդները: Քրեական իրավունքի կարգավորման առարկայի հասկացությունը: Քրեական իրավունքի մեթոդները և դրանց իրականացման

առանձնահատկությունները քրեական օրենսդրության ընդհանուր մասում: Քրեական օրենսդրության սկզբունքների վերլուծություն՝ իրավապահ պրակտիկայի նյութերի հիման վրա:

Թեմա 2. Քրեական օրենք

Քրեական իրավունքի հիմնական աղբյուրները: Քրեական օրենքի հասկացությունը և հատկանիշները: Քրեական օրենքի կառուցվածքը: Քրեական իրավունքի նորմի հասկացությունը և կառուցվածքը: Դիսպոզիցիայի հասկացությունը և տեսակները: Սանկցիայի հասկացությունը և տեսակները: Քրեական օրենքի գործողությունը ժամանակի ընթացքում: Քրեական օրենքի հետադարձ ուժը: Քրեական օրենքի հետադարձ ուժը՝ դատական պրակտիկայի վերլուծություն: Տարածության մեջ քրեական օրենքի գործողության:

Թեմա 3. Հանցագործություն

Հանցագործության հասկացությունը: Քրեական օրենսդրության մեջ հանցագործության հասկացության սահմանման հիմնական մոտեցումները: Հանցագործության հատկանիշները. Հակաիրավականություն, մեղավորություն, պատժելիություն: Արարքի նվազ վտանգավորությունը: Հանցագործությունների դասակարգման հասկացությունը և քրեաիրավական նշանակությունը: Հանցագործության տարբերակումը այլ իրավախախտումներից:

Թեմա 4. Քրեական պատասխանատվության հասկացությունը

Քրեական պատասխանատվության հատկանիշները: Քրեական պատասխանատվության բովանդակությունը: Քրեական պատասխանատվության հիմքը: Քրեական պատասխանատվության իրականացման ձևերը: Քրեական պատասխանատվության դադարեցում:

Թեմա 5. Հանցակազմ

Հանցակազմի հասկացությունը: Հանցակազմի քրեաիրավական նշանակությունը: Հանցակազմի տարրերն ու հատկանիշները: Հանցագործության տարրերի պարտադիր և ֆակուլտատիվ հատկանիշները: "Հանցագործություն" և "Հանցակազմ" հասկացությունների հարաբերակցությունը: Հանցակազմի տեսակները:

Թեմա 6. Հանցագործության օբյեկտ

Հանցագործության օբյեկտի հասկացությունը: Հանցագործության օբյեկտի հիմնական հայեցակարգերը: Հանցագործության օբյեկտի իրավական նշանակությունը: Հանցագործության օբյեկտների տեսակները: Հանցագործության առարկան և դրա տարբերությունը հանցագործության օբյեկտից: Հանցագործության առարկայի և հանցագործության կատարման գործիքների և միջոցների տարբերությունը: Հանցագործության առարկայի քրեական իրավական նշանակությունը: Տուժողի հասկացությունը:

Թեմա 7. Հանցագործության օբյեկտիվ կողմը

Հանցագործության օբյեկտիվ կողմի հասկացությունը: Հանցագործության օբյեկտիվ կողմի պարտադիր և ֆակուլտատիվ հատկանիշները: Հանցագործության օբյեկտիվ կողմի քրեաիրավական նշանակությունը: Հանրորեն վտանգավոր արարք: Հանրային վտանգավոր հետևանքների հասկացությունը և տեսակները: Պատճառահետևանքային հարաբերությունների հասկացությունը և տեսակները:

Թեմա 8. Հանցագործության սուբյեկտը

Հանցագործության սուբյեկտի հասկացությունը և ընդհանուր հատկանիշները: Տարիքը՝ որպես հանցագործության սուբյեկտի հատկանիշ: Մեղսունակությունը՝ որպես հանցագործության սուբյեկտի հատկանիշ: Հանցանք կատարած անձի անմեղսունակության հասկացությունը, տեսակները և չափանիշները: Տարիքային անմեղսունակության հասկացությունը: Սահմանափակ մեղսունակություն: Հանցանքը ալկոհոլի ազդեցության տակ կատարելը: Հանցագործության հատուկ սուբյեկտի հասկացությունը և հատկանիշները: "Մեղավորի անձի" և "հանցագործության սուբյեկտի"

հասկացությունների հարաբերակցությունը:

Թեմա 9. Հանցագործության սուբյեկտիվ կողմը

Հանցագործության սուբյեկտիվ կողմի հասկացությունը և քրեաիրավական նշանակությունը: Հանցագործության սուբյեկտիվ կողմի պարտադիր և ֆակուլտատիվ հատկանիշները: Մեղքի հասկացությունը, մեղքի ձևերը: Դիտավորությունը և դրա տեսակները: Անզգուշությունը և դրա տեսակները: Անուղղակի դիտավորության և հանցավոր ինքնավստահության տարբերակում: Դրդապատճառի և նպատակի քրեաիրավական նշանակությունը ՝ որպես հանցագործության սուբյեկտիվ կողմի ֆակուլտատիվ հատկանիշներ: Անզգուշության և առանց մեղքի վնաս պատճառելու տարանջատումը: Իրավաբանական և փաստացի սխալի հասկացությունը և նշանակությունը: Իրավաբանական և փաստացի սխալների տեսակները:

Թեմա 10. Հանցագործության կատարման փուլերը

Հանցագործության փուլերի հասկացությունը և տեսակները: Հանցագործության նախապատրաստում. Հանցագործության նախապատրաստման բովանդակությունը: Հանցափորձ: Հանցափորձի տեսակները: Հանցագործությունից կամովին հրաժարում՝ հասկացությունը, հատկանիշները, տարանջատումը գործուն զղջալուց: Հանցակիցների հանցագործությունից կամովին հրաժարման առանձնահատկությունները:

Թեմա 11. Հանցակցությունը

Հանցակցության հասկացությունը և հատկանիշները: Հանցակցության հիմնական տեսությունները: Հանցակցության տեսակները: Հանցակցության ձևերը, դրանց սահմանազատման չափանիշները: Հանցակիցների տեսակները, միջնորդավորված օժանդակությունը, դրդչությունը, կազմակերպչությունը և օժանդակությունը ՀՀ նոր քրեական օրենսգրքի: Հանցակցի էքսցես:

Թեմա **12.** Հանցագործությունների բազմակիությունը

Հանցագործությունների բազմակարծության հասկացությունը և հատկանիշները:

Հանցագործությունների բազմակարծության իրավական նշանակությունը: Հանցագործությունների բազմակարծության տեսակները: Հանցագործությունների համակցությունը, դրա տեսակները: Հանցագործությունների համակցության և բարդ եզակի հանցագործությունների տարբերությունը: Հանցագործությունների ռեցիդիվի հասկացությունը և դրա տեսակները: Հանցագործությունների ռեցիդիվի քրեաիրավական նշանակությունը:

Թեմա **13.** Քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքները

Քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքների հասկացությունը և քրեաիրավական նշանակությունը: Քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքների հատկանիշները: Անմեղսունակությունը . Առանց մեղքի վնաս պատճառելը

Քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելը նյարդահոգեկան ծանրաբեռնվածության վիճակում:

Անհրաժեշտ պաշտպանությունը: Անհրաժեշտ պաշտպանության իրավաչափության սահմանները: Անհրաժեշտ պաշտպանության և ծայրահեղ անհրաժեշտության տարանջատումը: Հակաիրավական ոտնձգություն կատարած անձին բռնելիս վնաս պատճառելը: Անհաղթահարելի ուժը, ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքը: Հիմնավորված ռիսկ: Սպորտային ռիսկ: Մասնագիտական գործառույթների իրականացումը: Օրենքի կամ իրավական այլ ակտերի պահանջները կատարելը: Հրաման կամ կարգադրություն կատարելը: Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հետ համագործակցելը:

Թեմա **14.** Պատիժը

Պատժի հասկացությունը և հատկանիշները: Պատժի նպատակները: "Հանցանք կատարած անձի ուղղում" և "հանցանք կատարած անձի վերասոցիալականացում" հասկացությունների հարաբերակցությունը: Պատժի ինստիտուտի սոցիալ-իրավական էությունը:

Թեմա **15.** Պատժի տեսակները

Պատիժների համակարգը և տեսակները: Հիմնական և լրացուցիչ պատիժներ. Պատիժներ, որոնք նշանակվում են որպես ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ: Պատժի այլընտրանքային տեսակների զարգացման միտումները Հայաստանի Հանրապետությունում: Պատվավոր կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից, որակավորման դասից կամ պետական պարգևից զրկելը: Տուգանքը: Տուգանքը վճարելուց խուսափելու դեպքում քրեաիրավական հետևանքները: Հանրային աշխատանքները: Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը: Օտարերկրյա քաղաքացուն Հայաստանի Հանրապետության տարածքից վտարելը: Զինվորական ծառայության մեջ սահմանափակումը: Ազատության սահմանափակումը:

Կարճաժամկետ ազատազրկումը: Կարգապահական գումարտակում պահելը: Ազատազրկումը: Ցմահ ազատազրկումը:

Թեմա **16.** Պատժի նշանակումը

Պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները: Քրեական պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների լույսի ներքո: Քրեական պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքները ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների լույսի ներքո:: Ավելի մեղմ պատիժ նշանակելը, քան նախատեսված է օրենքով: Պատիժ նշանակելը չավարտված հանցագործության համար: Պատիժ նշանակելը հանցագործությունների համակցության դեպքում: Պատիժ նշանակելը դատավճիռների համակցության դեպքում: Պատիժ նշանակելը հանցագործությունների ռեցիդիվի դեպքում: Պատիժ նշանակելը համաձայնեցման կամ համագործակցության կամ արագացված կամ համաձայնությամբ տուգանք նշանակելու վարույթի դեպքում: Պատժի ժամկետները որոշելը դրանք գումարելիս: Պատժի ժամկետները հաշվարկելը և պատիժը հաշվակցելը

Թեմա **17.** Քրեական պատասխանատվությունից ազատելը

Քրեական պատասխանատվությունից ազատել ու հասկացությունը և հիմքերը: Քրեական պատասխանատվություն. Հայեցակարգ, պայմաններ (նշանները), Գործուն զղջալու դեպքում քրեական պատասխանատվությունից ազատելը. հասկացությունը, պայմանները, սոցիալ-իրավական նշանակությունը: Քրեական պատասխանատվությունից ազատելը տուժողի և հանցանք կատարած անձի հաշտության հիմքով. հասկացությունը, պայմանները, սոցիալ-իրավական նշանակությունը: Քրեական պատասխանատվությունից ազատելը վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով:

Թեմա 18. Քրեական պատժից ազատելը

Պատժից ազատելու հասկացությունը և հիմքերը: Պատիժը կրելուց պայմանական վաղաժամ կետ ազատելը. հասկացությունը, սոցիալ-իրավական էությունը, Պրոբացիայի ծառայության դերն ուգործառույթները: Պատիժը կրելուց պայմանական վաղաժամ կետ ազատելու պայմանները: Պատիժը կրելուց պայմանական վաղաժամ կետ ազատելու վերացնելը: Պատիժը պայմանականորեն չկիրառելը. հասկացությունը, սոցիալ-իրավական էությունը, սահմանվող փորձաշրջանը, Պրոբացիայի ծառայության դերն ուգործառույթները: Պատիժը պայմանականորեն չկիրառելը: Հղի կնոջ կամ խնամքին մինչև 6 տարեկան երեխա ունեցող անձի պատժի կատարումը հետաձգելը: Պատժից ազատելը կամ պատիժը հետաձգելը հիվանդության հետևանքով: Պատիժն ավելի մեղմ պատժով փոխարինելը կամ պատժից ազատելը: Պատժից ազատելն արտակարգ հանգամանքների հետևանքով: Պատժից ազատելը մեղադրական դատավճռի վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով:

Թեմա **19.** Համաներումը, ներումը, դատվածությունը

Համաներումը և ներումը. սոցիալ-իրավական նշանակությունը, պայմանները, կիրառման սուբյեկտները: Համաներման և ներման սուբյեկտները: Ներման մասին ՀՀ օրենքը: Դատվածությունը. հասկացությունը, մարումը և հանումը:

Թեմա 20. Անչափահասների քրեական պատախանատվության առանձնահատկությունները

Անչափահասների քրեական պատասխանատվության առանձնահատկությունները ՀՀ Վճռաբեկ դատարանի նախադե պայի ն որոշումների լույսի ներքո ։ Անչփահասների նկատմամբ կիրառվող պատժի նպատակները։ Անչափահասների իրավունքների և շահերի պաշտպանությանն ուղղված միջազգային ակերիվ երլուծություն։Անչաձահասների նկատմամբ կիրառվող պատիժներ ։ Անչափահասների նկատմամբ պատիժ նշնակելու առանձնահակությունները ։ Անչափահասներին եվ 21 տարին չլրացած անձանց քրեական պատասխանատվությունից և պատժից ազատելու առանձնահատկությունները։

Դասընթացի ապահովվածությունը գրականությամբ

1. ՀՀ քրեական օրենսգիրք. Ընդունվել է 01.05.2021 թ. Ուժի մեջ է մտե լ 01.07.2022 թ .
2. Գ. Ս. Ղազինյան ՀՀ քրեական իրավունք Ընդհանուր մաս ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2012, 540 է ջ ։
3. Իսրայելյան Գ. Վ, Հարությունյան Ա. Ս. ՀՀ քրեական իրավունք Ընդհանուր մաս // ու սումնական ձեռնարկ – Եր. , հեղին. հրատ. , 2022. – 280 է ջ ։
4. Зограбян Н.Ю. Современные подходы к определению понятия конкуренции уголовно-правовых норм // Судебная власть. Апрель-июнь 2024. 4-6 (298-300). С. 72-78.
5. Аветисян С.С. Проблемы совершенствования принципов уголовного права в контексте нового Уголовного кодекса Республики Армения. «Դատական իշխանություն», – Եր .– 2014.–1–2/175–176, հունվար –փետրվար . – С. 7–15. Апрель-июнь 2024. 4-6 (298-300). С. 49-61.
6. Саргсян А.А., Акопян А.В. Некоторые особенности субъективной стороны ятрогенных преступлений // Судебная власть. 2024.
7. Аветисян С.С. Проблемы судебного толкования уголовного закона при наличии противоречий и неполноты / Закон и законодатель: проблемные вопросы законотворческого процесса. Мат. межд. науч.– практ. конф., сост. 24 ноября 2014г., Российская правовая академия Мин. юст. РФ.– М.: Изд–во РПА, 2015.
8. Аветисян С.С. Проблемы реализации уголовной ответственности за правомерные действия (сравнительно–правовое исследование). – Монография. – Германия: Изд–во «Palmarium Academic Publishing», 2014. – 441 с.
9. Аветисян С.С. Проблемы разграничения преступного поведения от непреступного в уголовном праве (теоретико–прикладное исследование в контексте обеспечения безопасности человека): Монография. – Ер.: Изд–во РАУ, 2011. – 814 с
10. ветисян С.С. Специальный субъект преступления и уголовная ответственность: Монография. – Ер.: Изд–во «Гитутюн» НАН РА, 2003. – 208 с.
11. Цагикян С.Ш., Зограбян Н.Ю. Разграничение преступлений по признакам специального субъекта преступления // Вектор науки Тольяттинского государственного университета. Серия: Юридические науки. 2014. № 1 (16). С. 109-

112.
12. Вардеванян А.П. Юридическая ошибка: понятие, виды и проблемы законодательного урегулирования // «Судебная власть», Ереван, 2013, 3, 164, С. 54-58.
13. Вардеванян А.П. Ошибка в уголовном праве: проблемы классификации и ее уголовноправовое значение // «Судебная власть», Ереван, 2012. 5, 154. С. 42-47.
14. Тадевосян Л.З. Особенности уголовной ответственности за неоконченную преступную деятельность. – М.: ун-т МВД РФ, 2006.
15. Тадевосян Л.З. Неоконченные преступления. Монография. ЮНИТИ-ДАНА: Закон и право, 2008. - 206 с.
16. Аветисян С.С. Соучастие в преступлениях со специальным составом - Монография. - Москва-Юнити, 2004. - 459 с.
17. Рашидян А.А. Соучастие в преступлении (проблемы теории и правоприменительной практики). Ер: «Эдит Принт», 2017.
18. Тадевосян Л.З. Добровольный отказ от преступления при соучастии. // Вектор науки Тольяттинского государственного университета. Серия: Юридические науки. 2010. № 1 (11). С. 139-142.
19. Ավետիսյան Ս.Ս. Օրենքում նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելը. տեսություն և պրակտիկա.– «Դատական իշխանություն». –Եր. – 2008. – 9/110. – էջ 32–38.
20. А.А. Саргсян Проблемы назначения более мягкого наказания, чем предусмотрено за данное преступление в судебной практике Республики Армения и Российской Федерации // Союз киминалистов и криминологов. 2022. № 1. С. 31-40.
21. А.А. Саргсян Некоторые вопросы освобождения от уголовной ответственности по новому уголовному кодексу РА // Сборник научных трудов международной научно-практической конференции: Актуальные проблемы уголовного законодательства и правоприменительной практики стран-участниц СНГ.- Ер.: РАУ, 2022.- С. 132-147.
22. А. Саргсян Некоторые проблемы законодательной регламентации состояния опьянения в системе норм Общей и Особенной частей УК Российской Федерации и Республики Армения// Журнал «Союз криминалистов и криминологов». № 2. 2021. С. 102-110.
23. А.А. Саргсян Некоторые аспекты назначения и реализации штрафа как альтернативного вида наказания. // Журнал «Судебная власть», 5-6/263-264-2021 май- июнь. 2021. С. 45-58.
24. А.А. Саргсян Деятельное раскаяние как основание освобождения от уголовной ответственности по законодательству Армении и России. // Журнал «Союз криминалистов и криминологов». № 1. 2020. С. 62-69.
25. 15. А.А. Саргсян Социально-правовое значение института деятельного раскаяния // Вестник университета Месроп Маштоц. 2020. № 1(23). С. 112-120.
26. ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի 2020 թվականի որոշումների ընտրանի. - Եր. «Զանգակ» հրատ.2022. – 922 էջ ։
27. ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու // կազմ. Ա.

Աբրահամյան, Է . Ավագյան, Ժ. Ստեփանյան . - Եր . , Էդիթ Պրինտ. 2019 960 է ջ :